


ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան Ծրք 10
Վեցամսեայ » 5
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԿԻՆ

Արտասահման
Տարեկան Ծրանք 12
Վեցամսեայ » 6
ԿԱՆԽԻԿ

20
ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏԱԿԱՆ

Կը հրահարակոյի Շաբաթ օրերը: Ծա-
նուցման տողը 10 Մանդիմ: Երկու քիւ ա-
ռաջ հրահարակոյած քերքը 40 Մանդիմ:
Չհրահարակոյած գրուքիւնը եւ յճրուիր:

Հասցե
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ՍԵՐ ԱՅԹԻՐ ՀԵՅԹԵՐ

Երկու շաբաթ է ի վեր քաղաքս կը գլու-
նուի իր տիկնոջը հետ Անգղիացի Սըր Այ-
թիւր Հէյթըր, որ աղբատ և բազմանդամ
ընտանեաց տէր արհեստաւոր դասուն մէկ
ոսկիէն մինչեւ երեք ոսկի կը բաշխէ, որ-
պէս զի արհեստին ի գործ դնելու համար
պէտք ունեցած գործիքներնին ծախու առնեն:

Այս բաշխումէն բաժին չունին ամու-
րիներն ու անկարօտները:

Այս շաբաթու Պոլսէն եկած հայերէն լը-
րագրաց մէջ կը կարդանք հետեւեալները:

«Երէկ» Վառնայէ վերադարձող Հայե-
րէն իմացանք որ Պուլկար կառավարութիւ-
նը երեք շոգենաւ յատկացուցեր է Պոլիս
դառնալ ուզող Հայ գաղթականաց, որպէս
զի նաւորչէք չունենալնուն համար այլ ևս
Վառնայի մէջ չի թափառին. այս շաբաթ

ալ քանի մը հազար Հայեր պիտի դառնան
եղեր Պոլիս »:

ՀԱՅԵԼԻ — Ասոր կը լինէ պոչաւոր սուտ.
Ճշմարտութիւնը սա է որ՝ այս շաբաթու ընդ-
ամէնը 10 գաղթականներ վերադարձան ի
Պոլիս, որոնց 7ին նաւորչէքներն ևս ուրիշ
ծախսերը դարձեալ Ազն. Օրիորդ Ֆրայլըրի
կողմէ հոգացուեցաւ:

«Պայրամի առթիւ այս շաբաթու քաղա-
քական ժողով չի գումարիր»:

Բոժոժիկ — Աս ի՞նչ ըսել է. արդեօք
քաղ. ժողովն ալ գործարար պիտի կտրէր...:

ՏԵՐՏԵՐ

Աղբատի որդի, պէլլիսիզ մարդ եմ,
Տուն, տեղ, միւլք ըստակ երբ պիտ' ունե-
նամ.

Խըղմէթքերարութեան ցանկութիւն չունիմ,
Ի՞նչ ընեմ, լայլած տէրտէր պիտ' ըլլամ:

Ծարգիկ պալատի, տուներու տէր եմ,
Ըստակ շատ ունին, հէլալ կամ հարամ.
Ես քաղցած չըպլախ, վոյ խեղճ անտէրիս,
Ի՞նչ ընեմ, լայլած տէրտէր պիտ' ըլլամ:

Աղքատը, գիտէ՞ք, կուտէ իշթահով,
Տարին միշտ աղած միս ու չոր թառան.
Անուշ ուտելիք ինչո՞վ տուն կուգայ,
Ո՞վ կուտայ ստակ, ծննդ տէրտէր ըլլամ:

Աղքատին սիրտը չո՞ւղեր օղուլ ուշախ,
Գիրուկ երեցկին, մեծ մանթօ վըրան.
Չորս հինգ հատ զաւակ, տեսքով թօմպալախ,
Ի՞նչ ընեմ լայլած տէրտէր պիտ' ըլլամ:

Տէրտէր ըլլամ բայց գիր կարգալ չիյտեմ,
Աս պոյիս ես երբ սորվիմ շարական.
Ատ ալ որ չեղաւ, հապա ի՞նչ ընեմ,
Չէ՛, կէնէ լայլած տէրտէր պիտ' ըլլամ:

Գիր, կարգալ, ուսում, է՛հ, պօշ բաներ են
Ու մեր ատենը հիչ չեն պէտք ըլլար.
Ցած հոգի ծուռ վիզ պէտք է տէրտէրին,
Է՛հ, անանկ է նէ՛ ես տէրտէր կըլլամ:

Տէրտէր որ եղայ՝ հարցնող չի կայ
Ո՞վ, կամ ի՞նչ եմ ես, աղէկ կը կարգամ.
Երգ, փոխի համար միշտ տիրացու կայ,
Ալ քարն ալ ճաթի՛ ես տէրտէր կըլլամ:

Արդ տէրտէր եղայ, փիլոն կը հագնիմ,
Չեղքս կառնեմ խաչ և Աւետարան:
Տըղայ ու մեռել կառնեմ կը տանիմ,
Մէկը յաւազան՝ մէկն ի գերեզման:

Միթէ գոռա՞ր է մարդ պսակելը,
Տուն—օրհնենք երթալ տարին երկու ժուռ.
Խոստովանցունել, պահպանիչ ըսել,
Կամ փարատեա մը՝ լոհուսայի տուն:

Ի՞նչ կ'ուզէք՝ ըսէք, տէրտէր ըլլալէն
Քեարըլ զենահաթ աշխարհքս չի կայ.
Նա՛ հիչ չի վախնար միւֆլիւզ ըլլալէն,
Ըստակը վիրա մէկ կողմէն կուգայ:

ՍԻՒԼ ԻՒԿ



ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ “ՀԱՅԵԼԻ” Ի

4. Պոլիս 6 Մայիս

Հայելիի երեք թիւերը աչքէ ան-
ցունելու բաղդն ունեցայ, զոր Պոլիս վե-
րագարձող գաղթական բարեկամ մը յա-
ջողեր էր հետը բերել: Կը շնորհաւորեմ ու
ի սրտէ կար և զօրութիւն կը մաղթեմ:

Ձեր փափաքին համեմատ կը խոստա-
նամ ամէն շաբթու կանոնաւոր թղթակցու-
թիւն մը ունենալ Հայելիի մէջ՝ Պոլսոյ վի-
ճակին վրայ. ուստի այսօրէն կը սկսիմ:

Այս օրերս դարձեալ աստիկ քննութիւն
և խուզարկութիւնք սկսան մասնաւորապէս
Բերայի Հայոց և Յունաց տուներուն մէջ

Պոլիս վերագարձող գաղթականք, այր՝
և կին, որ ասկէ առաջ քարափին վրայ պղզ-
տիկ հարցաքննութիւնէ մը անցնելէ վերջը ե-
րաշխաւոր մը տալով ազատ կը թողուէին, հի-
մա անպատճառ ոստիկանութեան դուռը պի-
տի տարուին, ուր 6—7 ժամ սպասելէ վեր-
ջը կանայք և մանկունք կը ճամբուին, իսկ
էրիկ մարդիկ մէկ քանի օր վար կը գրուին:

Թէև հիմա թրքաց զարգացեալ մասին
աչքին մինակ յոյները ատելի կերեւան՝ բայց
ստորին դասը՝ թէ հայր և թէ յոյն մէկ
ջրով լուալու գաղափարին վրայ հաստատ կը
կենայ: Ամէն փողոցի բերան ոստիկանք կը
սպասեն. եթէ փողոցին մէջ երկու անձինք
քիչ մը բարձր ձայնով խօսին՝ ոստիկանք կռիւ
կարծելով՝ նոյն խօսողները պահականոց կը
տանին:

Առուտուր ըսուած բանին հօտը չի կայ:

Թրքաց, մանաւանդ հրէից կողմէ հայոց
եւ յունաց դէմ ուղղուած քաջբշուկները
անհանդուրժելի են:

*

*

Մեր ազգային գործերն ալ անկերպա-
րան վիճակ մը ունին. կրնամ ըսել թէ եր-
կու երեք ամիսներէ ի վեր եւ ոչ մէկ ժո-
ղով արգիւնաւոր նիստ մը ունեցած չէ. թէև

լրագրաց միջոցաւ կը յայտարարուի որ այս Ինչ Ժողովը երէկ կամ այսօր գումարուեցաւ, բայց հաստատուած է որ այդ Ժողովներէն եւ ոչ մին մեծամասնութիւն չունենալով՝ նիստ չեն կազմած. հետեւաբար՝ լրագրաց յայտարարութիւնները Ժողովուրդը խաբելու համար է: Օրմանեան Արքայանը յուսահատ է՝ հակառակ քաղ. Ժողովոյ ատենապետին համոզելներուն, որովհետեւ Ղրան մատուցած խիստ ստիպողական թաշտիկներուն անգամ կարեւորութիւն չի տրուիր:

Սահմանադրութեան վերաջննիչ յանձնաժողովը՝ ալ եւս գոյութիւն չունի: Ազգ. Ընդհ. Ժողովոյ ըստ առաջնոյն մերթ ընդ մերթ նիստ գումարելու համար նախապէս տրուած արտօնութիւնն ալ առ այժմ ետ առնելած է:

Վերջին լուր: — Որպէս զի Թրքաց յունաստանի վրայ տարած յազմութեան լուրերէն քաջալերեալ Փոքր Ասիոյ մէջ քիւրտերը հայերուն վրայ յարձակելով առ այժմ խնդիր չի հանեն՝ կառավարութիւնը անոնց պետերը համոզելով ու դրամական նուէրներով ուրիշ տեղ կը շրկէ եղեր:

ԲԻԿՄԱԼԵՕՆ

ԱՄԻՐԻԱՆԵԱՆՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Հինգշաբթի օրը Ամիրիանեանց վարժարանն ընդունուելու համար նախապէս ստորագրուած երկսեռ 350 տղոց կենդանաբար քաջուելով անոնց մէջ գտնուած խիստ կտրօտներուն համար պատրաստուելիք հագուստի չափերն առնուեցան. երէկ ալ՝ բոլոր ուսանողը բժշկական քննութենէ մը անցան: Զարմանօք ստուգեցինք թէ՛ ասոնց մէջ Վառնաքիներու զաւկներ ալ կան եղեր բաւական թուով, որոնք գաղթական չլլալնուն պատճառաւ թէեւ առջի բերան մերժուելու են՝ բայց ծնողքներնուն ազաւանքին պաղատանքին չի դիմացուելով ընդունուելու են. ասով այդ ծնողքները հաստատած կըլ-

լան թէ իրենք յոյսերնին կտրած են Ազգային բարեկարգ վարժարան մը ունենալէ: Ահանջնին խօսի «սանկ կրնանք ընել, նանկ կրնանք ընել» ըսելով՝ հպարտացող կարգ մը կօսութիւններուն:

Կը լսենք թէ տեղւոյս նորընտիր Թաղ. Խորհուրդը որ ամիսէ մը ի վեր ընտրուած է՝ վերջապէս իր պաշտօնին գլուխը պիտի անցնի եղեր. . . չենք գիտեր ե՞րբ:

Հարց—Պատասխանի

Խորհրդապահ հութեան մասին կանայք որո՞ւ կը նմանին.

— Պատժական ատենի հարցաքննիչ պաշտօնէի մը, որ նախ անուշութեամբ որսալով՝ գաղտնեացի վերահասու կըլլայ, յետոյ՝ դատաւճիռի ստորագրելով՝ մահուանդ պատճառ:

Աշխարհիս մէջ ամէն տեսակ կռիւներու պատճառները քանի՞ են.

— Չորս: Ես, Դուն, Իմ, Բուկ:

Ի՞նչ է ստախօսութիւնը.

— Ընթացիկ դրամ:

Ինչ են մեռեալները:

— Վճարուելու համար պայմանաժամին սպասող բօլիցաներ:

Ի՞նչ է գերեզմանը.

— Միշտ փոխառութիւն ընող պանգա մը:

Ի՞նչ է նոր տարին.

— Պզտիկ տղայ մը որ միշտ կը սիրուի: Բժիշկին ստացուածքը ի՞նչ է:

— Մարդկանց մարմինը:

Թարգմ.

Չ ու ա Ր Ա ա շ ի ֆ

ՀԱՃԻ ՀՈՌՈՓ ԽԱԹՈՒՆԻՆ ԿՏԱԿԸ

Հաճի Հոռոփ խաթունը՝ որ իննսուն տարին թեկնախաճ՝ բայց վաթսունէն վեր չէր ելներ, անցեալները հանսին հետ աւրելով կը որոշէ իր ունեցած գոյքը մեռնելէն ետքը ներոջը թողուլ. ուստի տանեքէք քահանայն տուն կը հրաւիրէ կտակ մը պատրաստելու համար:

— Տէր պապա, սա հարսիս ծառքէն արթըն եկյտիր ալլահ, իս ամէն օր մահման տողերու կը հանգստանայ:

— Համբերութիւնը կեանք է հաճի խաթուն:

— Արթըգ պուշագ քէմիյէ տայանտը տէր պապա. էս անոր հախէն պիտի կամ ինչ ունիմ չունիմ, իյնէտէն իյնէլիքտէն ներոջս պիտի կտակեմ. իշթէ ասոր համար բեղ ուզեցի քի՛ ինծի կտակ մը գրես:

— Հաճի խաթուն, ինչխտար ըլլայ նէ ազնիկդ կը սեպուի. նայէ Սուրբ Գիրքը ինչ կ'ըսէ, «Եթէ զընկեր քո մեղանչիցէ՝ եթաթանսնիցս ներեցիս»:

— Չէ՛, չէ՛, իլլէ քի ես անոր հախէն պտոր գամ:

— Արիւն ձեր ի գլուխ ձեր. արթըխ դուն գիտես: Ո՛ւր է, օխա խալէմ՝ ունիս:

— Ամենական պանը հաղըրեր եմ. էրէկուրնէ գիտէի քի ասոր տղաքը առնէ պաղնիք պտոր երթայ ես ալ մինակ պիտի մընամ, թամ ֆըրսանդ է ըսելով՝ հէմ քեզի խապոր ըրի՛ հէմ թոռանս Նիշանին ըսի՝ դրպատունէն օխա խալէմով թուղթ բերաւ: Սա իւշ աեագ մասսին առջըը հրամմէ նստէ:

Քահանայն — Շատ աղէկ, — ըսելով հետեւեալ նախաբանը կը սկսի գրել:

«Իս նուաստ աղախինս Աստուծոյ մահ-

տեսի Հոռոփ խաթունս, ի կենդանութեան իմում հետեւեալ նշանակած ինչքերս ներոջս Նունեայ հանրմին կը կտակեմ»:

— Ըսէ նայինք օրհնած, ինչ ունիս:

— Էյ սանքիմ փառք տիրոջս. վուճուտճա պան մը չունիմ. կիւճս խուվէթս տեղն է:

— Ադ չեմ հարցուներ կոր. ինչ մալ ունիս նէ անիկայ ըսէ քի գրի անցունեմ:

— Հէմէն աչքդ խաղայ տէր պապա, մոլոր հասկցայ. հիմա նայէ քի ըսեմ. չորս թէնճիրէ երկու գառավանա:

(Գրելով) — Չորս թէնճիրէք և երկուս գառավանայս:

— Իրեք պախըռ քէքճէ՛ մէկը քէվիլի:

— Երիս քէքճէս պախըռս, մին քեափ կիրեալ:

— Մէկ մենճ մօշրուբա մը, քիւրին սաբլըն, չամաշըրի խաղանըս:

— Մի մօշրօբայս և մի քիւբական սաբլըս հանդերձ խաղանիւք չամաշրական: Մութ վախին թախըմը լմնցա՛ւ:

— Չէ տահա, կայնէ քի միտքս բերեմ: Հա, նայէ պիտի մոռնայի, երկու խաբախը սահան, ըսկարա մը, իրեք հատ մաշա, երկու սաճաեաղի՛ մէկուն օտքը կօրեած:

— Երկուս սահանըս հանդերձ գառափիւք, մի ըսկարայս և յերիս մաշայս հետ երկու սաճաղեամբ, յորում միոյն ոտն կոտորեալ է:

— Քեզի պան մը մսե՞մ տէր պապա

— Երկուքը ըսէ:

— Հարերնիս մարերնիս՝ վախթին մեզի կարգալ չի սորվեցուցին տէ՛ ասանկ մընացինք. միսի վրտս, էս ալ հոյ էմ քի.

— Հաճի խաթուն, գիտես քի ամէն հայ կը հասկնայ սա գրաբառը. հիմակուան ճահիլները աշխարհաբառ մըն է բռներ կերթան. խօյի գրաբառ գիտցողը բէք նատիր կը գտնուի:

— Աման տէր պապա, անանկ բէք չի հասկցուելիք լեզուով չի գրէիր օր կարգացողը հասկնար:

— Դուն հոգի մի՛ ընել . պաշխա ի՞նչ
ունիս նէ զուրցէ որ գրեմ:

— Տասնըջորս կերակուրի, իրեք խո-
ւերս պիչիմի, մէկ հատ ալ չուխուր թա-
պախ. էրկու չորպաի քեասէ:

— Չորեքտասանս կերակրոյ, յերիս
խայրխայիչիմիականս և մի խոր թապախունս
հանգերձ զերկուս չորպայի քեասէյիւք:

— Տեր պապա, կիտնալս աչըն կրա-
բար է կրածդ:

— Հապա՞, կտակ ըսածդ ասանկ կը
գրուի:

— Ո՛ւյ օղջ ըլլաս:

— Սուֆրա թախըմին լմնցա՞ն:

— Չէ տահա . նայէ միտքս էկաւ .
վեց դգալ, օխտը չաթալ, իրեք հատ ալ
տանակ:

— Վեց դգալունս, եօթն չաթալս և
երես թուրըս:

(Շարունակելի)

ԵՐԿՈՒ ՏԻԿԻՆՆԵՐ

Թէֆար հանըմ, տղաք իրիկունները
աս ի՞նչ կանուխ կուգայ կոր:

— Սէպէպը չիյտես:

— Չէ:

— Պիտի նշանուի տէյի իչկին Ֆէրա-
ղաթ է ըրեր, անոր համար կանուխ կու-
գայ կոր:

— Էյ նա՞սըլ, իչկին կտրեց նէ պա-
քէ անանկ շարխատա բաներ կընէ՞ կոր:

— Չէ քուրուկ, չէ, կուգքի պէս կը
նստի, հացը ուտելուն պէս կը պառկի, պա-
քի մինչև առտու ալ քունը տանի՞. դիշեր-
ները կելլայ կելլայ կը նստի:

— Էյ դուն ալ կ'երուէիր քի իչկիլի
ըլլայ նէ՞ ճիվէն քաշես չիմանար:

— Էյ սանքի մէկ թարաֆէն աս հա-
լը աղէկ է ամա՞ քուրուկ կ'ուզէ քի ես ալ
հետը արթուն կենամ:

— Անանկ է նէ վաղընէ թէզը չի
կայ, ել տղաք կարգէ քի իչկիլի պաշլայէ
աէ ատ փորձանքէն ազատիս:

ԻԱՑ ՆԱՄԱԿ

Ճէօհէր և թաթիպէ ՏՈՒՏՈՒՆԵՐՈՒՆ
կողմէ հետեւալը ստացած ենք:

Ղազէթայիդ մէջ

Մեզ ալ էս կըրեր,

Աս ի՞նչ խըյանէթ

Մարդ մըն էս եղեր:

Ի՞նչ ընենք, պա՛րոն,

Լաթի սէպէպէն

Մահրո՞ւմ մնայինք

Ժառտէնին զէվքէն:

Խօսքը մէջերնիս՝

Նոր լաթ ունէինք,

Ամա հիչ մէկը

Մենք չի սեպէինք:

Էյէր քի քիչ մը

Խիպ ունենայինք՝

Ան հիյէթոփիս

Հիչ հոն կերթայի՞նք:

Էրկու աչվընին

Քէօռնա պիլէքիմ,

Քի խաբաթմաէս

Ձիրօզ կախեցին:

Ալ լայլած անկէ

Էրթալու էինք,

Չէ նէ եուհաի

Կը պոնըւէինք:

Պիտի կըրես նէ՝

Թէքմիլը կըրէ,

Խաթըր ու կէօնիւլ

Նայել պէտքը չէ:

Խըռգանուս համար

Պասմա էս ըսեք:

Պասմա չէր Պա՛րոն

Շալ էօրնէի էր:

Մէյ մ'ալ ժարաքէնին

Մէջի չէշմէին

Պերաննիս դըրինք

Կուռա կուռա խմեցինք:

Կըսես էղեր քի՝
 “Իմ” պարտքս է գրել,
 Զի աստիկ բաներ
 Պատիւ չեն բերեր”:

Ուզածըդ կըրէ,
 Հիչ ումոռնիս չէ՝
 Սա սօն պէյիթը՝
 Մեզի համար է,

“Արսըդ տէմիշէր
 Նէտէ՞ն արլանըր,
 Զուլ չարութի կիսէ՝
 Եինէ սալլանըր”:

Ճէօհեր, Թաթիպշէ

— 0 —

Գաղթական տիկին Բուրմինէ անցեալ
 օր սենեակ մը վարձելու համար տուն մը
 կը մտնէ:

Տան տիրուհին — Օթուրտուղընըլ էվ-
 տէն նիճիւն չըգըյօրսընըլ:

— Օղլունու էվլէնտիրէճէկինտէն՝ ար-
 թըգ քիրաճը իսթէմէյօր:

— Գա՞ն քիշիսինիլ:

— Հէփսի պէշ քիշի:

— Ուշաընըլ վա՞ր մը:

— Եօգ, Էօգ, (ինքնիրենը) ուշախս
 էր պակաս:

— Մատէմ՝ քի ուշաընըլ Էօգտըր, այ-
 տա ալթմըշ զրուշ վէրէճէքսինիլ,

— Բէք էյի:

— Իւչ այլըղը տա բէշին իսթէրիմ:

— Օնա տա բէք էյի:

Տիկին Բուրմինէ հետեւեալ օրը եռամ-
 սեայն կը վճարէ ու երկու օր վերջն ալ իր
 երեք զաւկներուն (որոնց ամենէն մեծը ինը
 տարեկան) ու ամուսնոյն հետ նոր վարձած
 սենեակը կը փոխադրուի:

Տան տիրուհին՝ տիկին Բուրմինէի զա-
 ւակները տեսնելուն պէս կը գոչէ:

— Պուշլար քի՞մ տիր:

— Էվլատլարըմ՝ տըր:

— Պէն սանա կէչէն կիւն ուշաըն
 վա՞ր մը տէյի սօ՞րմատըմ մը:

— Հէ, սօրտուն, պէնտէ Էօգ տէտիմ.
 Հաթտա կիւճիւմէ պիլէ կիթտի քի պիր օ-
 տա թուլթմաֆ իսթէյէն ատամտա ուշաֆ
 պուլունուր քի պանա տա ուշաֆ սօրտուն:

— Էյ պու ուշաֆլար նէ՞ տիր,

— Նա՞սըլ ուշաֆ, պա՞ֆ, եինէ սէօյ-
 լէյօրսըն, պէնի մայթապ մը իտէյօրսըն:

— Ճանըմ, շու իւչ քիււիւլէր քիմի՞ն
 տիր:

— Էվլատլարըմ՝ տըր. մեղայ տէր
 Աստուած, հիչ 9, 7, վէ 5 Էաշընտա ու-
 շաֆ օղուր մը:

Տանտիրուհին կարծելովոր տիկին Բուր-
 մինէ վառնայի մէջ ուշաֆ բառին տղայի
 համար ըսուիլը գիտէր բայց չի գիտնալու
 կը զարնէր, սաստիկ բարկացած՝ տունէն
 դուրս ընել կը սպառնար. բարեբաղդաբար
 դրացի հայ տիկիններ վրայ հասն և միջա-
 մտելով՝ տանտիրուհին հանգարտեցուցին:

*
 *

Ի գիտութիւն մեր ընթերցողաց՝ հե-
 տեւեալ բառերը տեղացիներուն տուած նը-
 շանակութեամբը արժան համարեցինք հոռ-
 դնել:

Ուշաֆ՝ Տղայ: Գաթօյ՝ Մառան: Զա-
 տըր՝ Հովանոց: Էնգաս՝ Սուտ: Իսլա՛՛ Ա-
 ղէկ: Բէչգօ՝ վառարան: Գա՞ն պաշսընըլ՝
 Բանի՞ հոգի էք: Պակա՝ Ստորին: Մառ-
 գա՝ Նամակաղրոշմ: Գարթօֆ՝ Բաթաթէգ:
 Բիբի՝ Հնգկահաւ: Հըհը՝ Այո՝: Բորու՝
 Ծերունի: Բոսթ՝ Գէշ: Սըղտրմա՝ Խո-
 լոված պաղ միս: Արթըգըն՝ Ալ Լա: Մա-
 եհրօ՝ Խոհանոց: Բունար՝ Հոր: Ավլու՝
 Պարտէլ: Զօճուֆ՝ Մանչ տղայ:

Եթէ մէկը իր խօսակցին առջև գլուխը
 ծռէ՝ “ոչ” ըսած կըլլայ, իսկ եթէ զայն գո-
 ռոյաբար աջ ու ձախ տարուբերէ՝ “այո՛”:

ՀԱՆԵԼՈՒԿ

Թիւ 4


Ջուրն ալիւրով խառնըեցաւ,
կակուղիկ էր տնկըեցաւ,
կոտորուելով հորը մըտաւ,
Մըտաւ խաղաց՝ ելաւ մարած:

Թիւ 2 Հանելուկը որ սեւամորթ Արա-
բացին եւ իր սեւամորթ ձին կը նշանակէր,
առաջին լուծողն եղաւ Տիար Համբարձում՝ Ս.
Ջարգարեան: Իսկ Թիւ 3 Հանելուկը որ Աղ
կը նշանակէր՝ առաջին լուծողը եղաւ Տիար
Պօղոս Գաֆաֆեան:



Ամեն տեսակ տը-
պագրական կա-
ղապարներ պա-
տրաստող, նաև
թէ անձնական

և թէ՛ առևտրական կնիքներ: Դիմել ի վար-
նա Ձիլինկիրէր փողոց Թիւ 561:
Գին գոհացուցիչ: 4—12



Էրիկ կնկան կուիւ

Գաղթական Սիմա տուտուն, որ ամէն
ատեն էրկանը հետ կուռելու բարի սովո-
րութիւնն ունէր, անցեալ շաբթու ալ սոս-

կալի կուիւ մը կընէ. ամուսինը՝ կնոջը այս
անտանելի ընթացքէն այլ ևս ճարահատեալ՝
Պոլիս կը մեկնի. Սիմա տուտուն այս չորեք-
շաբթի օրը Հիւանդանոց կը դիմէ և քննիչ-
ներուն կ'ըսէ.

— Պարե ձեզ.

— Աստուծոյ բարին:

— Քա ճանըմ՝ ինչո՞ւ իմ՝ չըլլալուիս
նալուներ տուիք տէ Ըսթանպօլ խաւրիցիք.

— Չըլլալուի ի՞նչ ըսել է:

— Իշթէ ամա՛ն, կըլխաւորիս համար
կըսեմ կոր:

— Է, ի՞նչ է եղեր.

— Քա ճանըմ, անցած գիշեր հետըս
սրբողեցաւ տէ՛ ելաւ գնաց. հիմա իմացայքի
Ըսթամպօլ է կացեր:

— Մենք ի՞նչ ընենք, ինք եկաւ պի-
տի երթամ ըսաւ:

— Էյ մէյ մը օյտուն ինծի կալու հար-
ցունելու չէիք.

— Ինչո՞ւ հարցնենք. հէմ դուն չի
գիտէի՞ր երթալը:

— Ո՞րկէ պիտի գիտնայի, հոգի:

— Կեցիր որ ըսեմ, գացած ատենը
տունին մէջէն բան մը չի տարա՞ւ հետը.
չիտակ խօսէ:

— Հա՛, մէկ ետթախ եօրկան ու եօլ-
ծիի հին չանթան տարաւ:

— Էյ իշթէ ատով չի հասկցա՞ր քի
կերթայ կոր:

— Չէ՛, հիչ վրան չի դրի:

— Ինչո՞ւ:

— Ձիւնքի պաշխա վախիթ ալ հետս
աւրըներ նէ՛ ետթախ եօրկանը խան կը տա-
նէր ամա՛ ինծի շախա ծիլվէ ընելու համար
էր:

— Է՛հ, ամեն տան շախա ծիլվէ
չըլլար, աս հեղու ալ իրաւն ըրեր է:

Գնումն և վաճառումն հին ու նոր ամէն
տեսակ նամակադրոշմերու (բուլ)՝ դիմել Հա-
յելի խմբագրութեան:

Պիր քեօյլիւ իլէ սարաֆ

Ֆրանսա քեօյլիւլէրինտէն պիրի՝ կէշէն-տէ պիրինձի տէֆա օլարաֆ Բարիդէ կիտիւ՝ շէհրի մէզ քիւրըն խանէ վէ տիւքեանլարընըն կիւզէլլիդինէ հայրան օլուպ սէյր ու թամաշա իթտիդի սըրատա՝ եօլունըն իւթիւնտէ պէօյիւք պիր պօշ տիւքեան կէօրիւր . մէզքիւր տիւքեանտա եալընըզ պիր ոարաֆ օթուրմուշ պուլունարընտան՝ քեօյլիւ մէրաֆ իտուպ սիւվալ իտէր քի՝

— Միւսիւ , պու պօշ տիւքեանըն իշինտէ օթուրմուշ նէ՝ սաթընօրընըզ .

— Էշէկ պաշը , ճէվապ վէշիր սարաֆ , քեօյլիւյի թաարիդէ ալմաֆ Էֆքեարըյլա :

Քեօյլիւ իսէ՝ ֆիթուրսըզլըզլա շու ճէվապը վէրիր .

— Կէօրիւնիր քի չօֆ ախլուիթա իտէ-եօրսընըզ , միւսիւ , զիրա տիւքեանընըզըն իշինտէ եալընըզ պիր էշէկ պաշը գալմըշ . :

Ա.Զ.Դ

Այցեատման , հասցեատման . նամակա-զլուխ , հրաւիրատման , բարենիշ , տոմսակ , եայլն եայլն թէ՝ պարզ և թէ՝ ոսկեզօծեալ մէկ քանի գոյներով կը տըպագրուին : Քաղաքներէ եկած յանձնա-րարութիւնք վուծով կը կատարուին : Գին գոհացուցիչ : Դիմել հայելիի խըմբագրութեան :

ԳԱՐԵԳԻՆ ՏԱՆԱՊԱՇԵԱՆ և ԸՅԿ
Դերձակ

Մեծ փողոց Բրէսլաւսքա , թիւ 3 վառնա

Վայելուչ ձեւ և ընտիր կերպոսեղէնք : Գոհացուցիչ գին : Վճարումին հարիւրին 25ը կանխիկ , մնացորդն՝ շաբաթականով , երեք ամսոյ միջոցին : Առիթէն օգտուեցէք :



ԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Թրեովսա փողոց . Թիւ 182

Տիար Մալեանի գրասենեկին
ֆոյ :

կը վաճառէ ընտիր ապրանք	հետեւ-	
եալ գիներով ,	Մշ.	Վր.
2էթ	քիւօն	5 20
կարաֆ	"	8 20
2իթապաուղ	"	3
Շաքար	"	3 5
Սուրճ	"	13

ՄԵՔԵՆԱՅԻՑ ԳՈՐԾԱՐԱՆ
(ՊՈՒԼԱՐԻԱ)

Գ . Յ . ԲԱՐԹԱՄԵԱՆ Լ Բ . Է . ԲԱՆՁՈՒՓ
Վառնա 5րդ թաղ ելլտըլ թապիա

Ամէն տեսակ մեքենաներու շինութիւն և նորոգութիւն . ջաղացքի թէ՝ շոգիով և թէ պարզ ջուրով գործող մեքենաներ , նաեւ շոգեմակոյկներ , ջաղացքի վերաբերեալ ամէն տեսակ երկաթեայ գործիքներ , գրամական գասաներ , շէնքերու յատուկ երկաթեղէններ , տեսակ տեսակ ջրհաններ ևայլն ևայլն կը պատրաստուին : Պատ . Յաճախորդք միշտ գոհ մնացած են սոյն գործարանի շինու-թիւններէն :

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Ռուսձուգ . Տիար Եղրաթ Սարաֆեան :
Միլիտարէ . Տիար Արթաքի Սարգիսեան :
Շումլա " Յովհաննէս Մաճարեան :
Սօֆիա " Յակոբ Ծերուռեան :
Գահրէ " Մ . Հունկ :
Լոնտոն " Հայկ Աստուածատուր :
Բարիդ

Отговоренъ-редакторъ: Н. Драгулевъ
Печатница „Взаимность“ — Варна.